

լեզուներով, դասախօսություններ, վիճարանական հաւաքոյթներ եւ գրական դատավարություններ²¹:

Հին աստածներու շուրջ մինչեւ ցարդ գրուած կամ խօսուած կարծիքներէն կարելի է ամփոփել հետեւեալ հարցերը, որոնց վրայ անշուշտ յետագայ բանախօսները պիտի ծանրանան.–

Ա. *Հին աստածները պատմական թատերախաղի բնոյթ ունի՞ եւ այդ տեսակէտով թերութիւններ կը ներկայացնէ՞:*

Բ. *Հին աստածները ոեւէ առնչութիւն ունի՞ հայկական միջավայրի հետ եւ այդ տեսակէտով որքա՞ն յաջողած է:*

Գ. *Թատերախաղը կը լրացնէ՞ տոռամէ մը պահանջուած յատկութիւնները, ունի՞ տոռամաթիք տիպարներ, գործողութեանց հոգեբանական զարգացում եւ տոռամաթիք վախճան:*

Դ. *Շանթի ոճը որքա՞ն համապատասխան է լեզուի օրէնքներուն եւ թատերախաղի նիւթին:*

Ե. *Շանթ որքա՞ն յաջողած է իր ցայտեցուցած մտքի եւ սրտի պայքարին մէջ:*